



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Անտոնյանը, Անահիտ Առաքելյանը, Լենդրուշ Արշակյանը, Աննաման Բաբայանը, Խաչիկ Իսրայելյանը, Անահիտ Հակոբյանը, Կարեն Հարությունյանը, Արմեն Ղազարյանը, Քրիստինե Մանուկյանը, Արթուր Մուրադյանը, Գևորգ Մուրադյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** բնակավայրերի վարչական ղեկավարներ Բաղդասար Թովմասյանը, Ջոհրակ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանը, գնումների բաժնի պետ Միեր Պապյանը, բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ Բենիամին Թադևոսյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:**

**Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:**

1. Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ջեյ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների՝ **Նաիրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Նաիրի համայնքի 2024 թվականի հունվարի 18-ի արտահերթ առաջին նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

3) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

4) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

5) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

6) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

7) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

8) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

9) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

12) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

13) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

14) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել- 1

Որոշումն ընդունված է. /Կցվում է որոշում N 1-Ա/

2.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Նաիրի համայնքի հաշվարկային հաշվում առկա մնացորդը՝ Նաիրի **համայնքի ավագանին որոշում է՝**

Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 275-Ն որոշումը շարադրել նոր հետևյալ խմբագրությամբ.

«Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նաիրի համայնքի 2024 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածներ 1-6-ի:»:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ն/

3.Լսեցին  
**ՀՈՂԱՄԱՍԻ                      ՆՊԱՏԱԿԱՅԻՆ                      ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ                      ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ**  
**ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-491 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պոռշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Համլետ Մարատի Հովհաննիսյանին պատկանող 07-053-0336-0024 կադաստրային ծածկագրի 1.366535 հա